«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ի նախագահ
Լիանա Դոյդոյանին

Հարգելի Լիանա Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 2018 թվականի հունվարի 12-ի տեղեկատվություն ստանալու թիվ 322-ի 9 հարցման՝ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության աշխատակազմը 2017 թվականի դեկտեմբեր ամսին ՀՀ պետական բյուջեի «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի միջոցների հաշվին ձեռք է բերել 975 հատ ամանորի շնորհավորական բացիկ՝ 682,100 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Ինչ վերաբերում է ամանորյա ընդունելությանը, ապա դրա համար միջոցներ են հատկացվել ՀՀ վարչապետի արտրողակարգային ծախսերից, և համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի՝ այդ ծախսերը ներառված են գաղտնիք պարունակող գնումների պլանում, ուստի հրապարակման ենթակա չեն: